

է, իսկ Ռակուզացի Պոնիփակիոսի (ԺՁ. դար) պատմութեան համաձայն, նոյն մատուռը շինուած է տեղւոյն վրայ այն աշխատանոցին՝ ուր Նիկոգրիմոս շինեց խաչելութեան այն հրաշալի քանդակեալ պատկերը՝ որ այժմ Լիւքի մայր եկեղեցիին մէջ կը յարգուի, և կ'ըսուի թէ նոյն քանդակին գլուխը երկնային ձեռքով մը շինուած է Նիկոգրիմոսի քնացած ժամանակ (D. B. C. T. M.):

14. — Ս. Գերեզման, Իւրպիկոսի զրոյցը, (Ը. դար). — Իւրպիկոս երուսաղէմի կայսերական կառավարիչն էր, ան եօթը կայսրերու օրով կառավարչութիւն ըրած էր: Երուսաղէմէն երեք մղոն հեռու կար տեղ մը, ուր Ս. Մարիամ՝ Տիրոջ մայրը ժամանեց, երբ Բեթղեհէմ կ'երթար, ան նստաւ քարի մը վրայ, և օրհնեց զայն: Իւրպիկոս կառավարիչը նոյն քարին տուաւ քառակուսի սեղանի ձեւ մը՝ մտադիր ըլլալով զայն զրկել Կ. Պոլիս: Բայց երբ ան Ս. Ստեփանոսի գրան քով բերաւ զայն, աւելի հեռու չկրցաւ շարժել զայն, քարը զոյգ մը եզներ լծուած կը քաշէին. և երբ անոնք տեսան որ աւելի առաջ շարժելու կարողութիւն չունին, ետ տարին զայն դէպի Տիրոջը Ս. Գերեզմանը և հոն շինեցին սեղան մը ուր քրիստոնեայք կ'աղօթէին: Նոյն սեղանը կը գտնուի Քրիստոսի Ս. Գերեզմանի մէկ կողմը: Այս Իւրպիկոսը՝ երբեմն կառավարիչ Անաստաս կայսեր (713-716) օրով, մեռած է Կ. Պոլիս, և թաղած են հոն, բայց հողը չէ ընդունած զայն, վասն զի անոր գերեզմանը ուղղակի դուրս նետեց զայն (P. T. S. vol. 1):

15. — Մեծն Կարոլոսի ուխտը Ս. Գերեզմանին (801). — Աւանդութիւնը Մեծն Կարոլոսը (742-814) կը